ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հրաձգության հրահանգչի որակավորման ստուգման հանձնաժողովի
2024թ. «18» հունվարի թիվ 1 որոշման

ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՀՐԱՀԱՆԳՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Ո՞ր իրավական ակտով է կարգավորվում զենքի հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում:

1. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով.
2. ՀՀ քրեական օրենսգրքով.
3. «Զենքի մասին» ՀՀ օրենքով:

2. Ի՞նչ են կոչվում իրենց կառուցվածքով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու կամ ազդանշան արձակելու համար նախատեսված սարքերն ու առարկաները:

1. զենք.
2. ռազմամթերք.
3. հրազեն:

3. Ի՞նչ են կոչվում նշանակետը խոցելու համար նախատեսված առարկաները, սարքերը և նետվող հարմարանքները, որոնք պարունակում են պայթուցիկ, նետողական, հրատեխնիկական, արտամղիչ լիցքեր կամ դրանց համակցություն:

1. ռազմամթերք.
2. փամփուշտ.
3. հրազեն:

4. Ի՞նչ է կոչվում զենքից կրակելու համար նախատեսված համասարքը, որը պարկուճի օգնությամբ մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոց, նետողական լիցք և նետվող հարմարանք:

1. փամփուշտ.
2. ռազմամթերք.
3. արկ:

5. Ըստ համապատասխան սուբյեկտների կողմից օգտագործման նպատակայնության, ինչպես նաև հիմնական չափանիշների և բնութագրող հատկանիշների՝ քանի՞ տեսակի է լինում զենքը:

1. քաղաքացիական, ծառայողական և մարտական.
2. ողորկափող, ակոսափող և սառը շեղբավոր.
3. սպորտային, որսորդական և ինքնապաշտպանական:

6. Ու՞մ է պարտավոր հայտնել զենք գործադրողը զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքի մասին, ինչի հետևանքով մարդու առողջությանը վնաս է պատճառվել:

1. ոստիկանությանը.
2. դատախազությանը.
3. քննչական կոմիտե:

7. Ի՞նչ ժամկետում է պարտավոր զենք գործադրողը, ինչի հետևանքով մարդու արողջությանը վնաս է պատճառվել, հայտնել ոստիկանությանը:

1. անհապաղ, բայց ոչ ուշ, քան քսանչորս ժամվա ընթացքում.
2. անհապաղ, բայց ոչ ուշ, քան տասներկու ժամվա ընթացքում.
3. դեպքի վայրի պատշաճ պահպանումն ապահովելուց հետո:

8. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի փողի տրամաչափը:

1. 9 մմ
2. 7,62 մմ.
3. 12 մմ:

9. Որքա՞ն է չլիցքավորված «Մակարովի» ատրճանակի քաշը:

1. 730 գրամ.
2. 810 գրամ.
3. 920 գրամ:

10. Որքա՞ն է լիցքավորված «Մակարովի» ատրճանակի քաշը:

1. 810 գրամ.
2. 730 գրամ.
3. 920 գրամ:

11. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի երկարությունը:

1. 161 մմ.
2. 126 մմ.
3. 156 մմ:

12. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի բարձրությունը:

1. 126.75 մմ.
2. 161,15 մմ.
3. 156,12 մմ:

13. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի փողի երկարությունը:

1. 93 մմ.
2. 98 մմ.
3. 97 մմ:

14. Քանի՞ ակոս ունի «Մակարովի» ատրճանակի փողը:

1. 4 ակոս.
2. 6 ակոս.
3. 8 ակոս:

15. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի փամփշտատուփի տարողությունը:

1. 8 փամփուշտ.
2. 7 փամփուշտ.
3. 16 փամփուշտ:

16. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի մարտական փամփուշտի քաշը:

1. 10 գրամ.
2. 6.1 գրամ.
3. 7.62 գրամ:

17. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի պողպատե միջնաձողով գնդակի քաշը:

1. 6.1 գրամ.
2. 10 գրամ.
3. 7.62 գրամ:

18. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի փամփուշտի երկարությունը:

1. 25 մմ.
2. 29 մմ.
3. 32 մմ:

19. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի գնդակի թռիչքի սկզբնական արագությունը:

1. 315 մ/վրկ.
2. 350 մ/վրկ.
3. 420 մ/վրկ:

20. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի փողային էներգիան:

1. մինչև 350 ջոուլ.
2. մինչև 315 ջոուլ.
3. մինչև 420 ջոուլ:

21. «Մակարովի» ատրճանակի մարտական արագահրաձգությունը:

1. 30 կրակոց/րոպե.
2. 16 կրակոց/րոպե.
3. 22 կրակոց/րոպե:

21. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի նշանառու կրակի հեռավորությունը:

1. 50 մետր.
2. 25 մետր.
3. 100 մետր:

22. Որքա՞ն է «Մակարովի» ատրճանակի գնդակի վտանգավոր թռիչքի հեռավորությունը:

1. մինչև 350 մետր.
2. մինչև 150 մետր.
3. մինչև 50 մետր:

23. Բնակավայրերից, հանգստի գոտիներից և ավտոմայրուղիներից ի՞նչ հեռավորության վրա է թույլատրվում ակոսափող որսորդական հրազեն օգտագործել:

1. 3000 մետր.
2. 5000 մետր.
3. 500 մետր:

24. Բնակավայրերից, հանգստի գոտիներից և ավտոմայրուղիներից ի՞նչ հեռավորության վրա է թույլատրվում ողորկափող որսորդական հրազեն օգտագործել:

1. 500 մետր.
2. 300 մետր.
3. 100 մետր:

25. Ինչպիսի՞ պատասխանատվություն է նախատեսվում բնակավայրերում և դրա համար չհատկացված տեղերում կամ սահմանված կարգի խախտումով հրազենից կրակելու համար:

1. վարչական.
2. քրեական.
3. քաղաքացիական:

26. Ինչպիսի՞ պատասխանատվություն է նախատեսվում զենք պահելու թույլտվություն ունեցող քաղաքացիների կողմից զենքն ու ռազմամթերքը պահելու կամ փոխադրելու կանոնները խախտելու համար:

1. վարչական.
2. քրեական.
3. քաղաքացիական:

27. Փամփուշտը չկրակվելու դեպքում քանի՞ վարկյանից հետո է թույլատրվում բացել զենքի փակաղակը:

1. 5 վարկյանից ոչ շուտ.
2. 10 վարկյանից ոչ շուտ.
3. 20 վարկյանից ոչ շուտ:

28. Ի՞նչ կարգով է տեղափոխվում զենքը:

1.ծածկաշապիկով կամ պատյանով կամ տեղափոխման համար նախատեսված գործարանային այլ տարայով.
2. պայուսակով կամ ճամպրուկով.
3. գոտկատեղին կամ թևատակին ամրացված:

29. Թույլատրվու՞մ է, արդյոք, ինքնուրույն կատարել զենքի բաղկացուցիչ մասերի և հանգույցների վերանորոգում, նրանց մեջ մտցնել կառուցվածքային փոփոխություններ:

1. արգելվում է.

2. թույլատրվում է.
3. անհրաժեշտությունից ելնելով:

30. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում վերին և ստորին վերջույթների զարկերակային արնահոսության ժամանակ:

1. դրվում է լարան.
2. դրվում է սեղմող վիրակապ.
3. վնասված մասը պահվում է սառը ջրի տակ:

31. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում ջերմային այրվածքների ժամանակ:

1. անմիջապես պահել սառը ջրի տակ.
2. մաքրել չոր շորով.
3. անմիջապես պահել տաք ջրի տակ.

32. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում փակ կոտրվածքի ժամանակ:

1. անշարժացնել կոտրվածքից վերև և ներքև ընկած հոդերը.
2. անշարժացնել կոտրվածքից վերև ընկած հոդը.
3. դնել տաք թրջոց:

33. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում շնչառության կանգի ժամանակ:

1. կատարել արհեստական շնչառության (ներփչումներ).
2. տուժածին տալ մեծ քանակությամբ հեղուկներ.
3. տուժածին ապահովել մաքուր օդով:

34. Թույլատրվում է արդյոք կրակային ընդմիջումների ժամանակ հրազենը պահել հրաձգարանի կրակային սրահում:

1. կտրականապես արգելվում է.
2. չի թույլատրվում, եթե չկա հսկողություն.
3. թույլատրվում է, եթե կա հսկողություն:

35. Թույլատրվում է արդյոք զենքը և փամփուշտները թողնել կրակագծում:

1. թույլատրվում է, եթե կա հսկողություն.
2. կտրականապես արգելվում է.
3. թույլատրվում է միայն կազմակերպության տնօրենի թույլտվությամբ:

36. Հրաձգարանում հրազենը քանի տարեկանը լրացած անձին է տրվում:

1. 16 տարին լրացած.
2. 18 տարին լրացած.
3. 21 տարին լրացած:

37. Պարտավոր է արդյոք հրաձգության հրահանգիչը զենքը ստացող անձին հրահանգավորել ու ծանոթացնել զենքի ու ռազմամթերքի օգտագործման ու դրանց հետ վարման անվտանգության կանոնների և հրաձգարանի ներքին կարգապահական կանոնների հետ:

1. պարտավոր է.
2. պարտավոր չէ.
3. պարտավոր է, եթե այդ մասին ցանկություն է հայտնում զենք ստացող անձը:

38. Ինչպես է իրականացվում հրաձգարանում զենք ստացող անձին հրահանգավորելու և ծանոթացնելու գործընթացը:

1. համապատասխան մատյանում կատարված անհրաժեշտ գրառում կատարելով և զենքը ստացող անձի ստորագրության նշումով.
2. սահմանված ձև նախատեսված չէ.
3. բանավոր կերպով:

39. Պարտադիր է արդյոք հրաձգարանում զենքի օգտագործման ժամանակ հրաձգության հրահանգչի ներկայությունը:

1. պարտադիր է.
2. պարտադիր է մինչև կրակ արձակելը.
3. պարտադիր է, եթե այդ մասին դիմում է քաղաքացին:

40. Ինչ է արվում հրաձգության ավարտից հետո չօգտագործված ռազմամթերքը:

1. անհապաղ վերադարձվում է ռազմամթերքը տված անձին.
2. տրվում է հրաձգության այլ մասնակցի.
3. տրվում հրաձգության հրահանգչին:

41. Թույլատրվում է արդյոք հրաձգություն իրականացնելու համար 14 տարին լրացած անձին տրամադրել հրազեն:

1. թույլատրվում է միայն հրաձգության հրահանգչի և տվալ անձի՝ զենք պահելու և կրելու թույլտվություն ունեցող օրինական ներկայացուցիչներից մեկի անմիջական ներկայության և վերահսկողության ներքո.
2. չի թույլատրվում.
3. թույլատրվում է միայն կազմակերպության ղեկավարի գրավոր համաձայնության դեպքում:

42. Ինչ սկզբունքով է աշխատում «Մակարովի» ատրճանակը:

1. ազատ փակաղակի.
2. կոլտ բրաունինգ.
3. փակաղակի կիսապտույտի:

43. Ինչ սկզբունքով է աշխատում «Գլոկ» ատրճանակը:

1. կոլտ բրաունինգի.
2. շարժական փակաղակի.
3. փակաղակի կիսապտույտի:

44. Հրաձգության հրահանգիչը պարտավոր է:

1. վերահսկել հրաձգարանի տարածքում անվտանգության պահանջների կատարումը.
2. ստուգել հրաձգության մասնակցի անձնագրային տվյալները.
3. մաքրել հրաձգության մասնակցի սեփական զենքը:

45. Հրաձգության հրահանգիչը պարտավոր է:

1. անհրաժեշտ և անհետաձգելի միջոցներ ձեռնարկել դժբախտ պատահարների դեպքում.
2. անվտանգության կանոնները խախտողներին ենթարկել պատասխանատվության.
3. կրակագծում նորոգել զենքը:

46. Հրաձգություն ժամանակ առաջացած պարզագույն խափանումները վերացվում են:

1. կրկնակի վերալիցքավորելու միջոցով.

2. զենքը արհեստանոց ուղարկելու միջոցով.

3. լիցքավորված զենքը այլ անձանց փոխանցելով:

47. Զենքի անխափան աշխատանքը ապահովելու համար անհրաժեշտ է:

1. ստուգել մասերի և մեխանիզմների աշխատանքը և մաքրել փողանցքը.

2. հրաձգությունից առաջ այն քանդել և հավաքել.

3. հրաձգությունից առաջ այն մաքրել և յուղել:

48. Արգելվում է կրակ վարել:

1. հրաձգարանի սահմաններից դուրս.

2. սև գույնի թիրախների վրա.

3. թեքված կամ անորակ թիրախների վրա:

49. Հրաձգությունը դադարեցվում է:

1. թիրախային դաշտում մարդկանց հայտնվելու դեպքում.

2. վատ բնակլիմայական պայմանների դեպքում.

3. սահմանափակ տեսանելիության պայմաններում:

50. Մինչև փամփշտատուփը լիցքավորելը փամփուշտները պետք է:

1. զննել ու համոզվել, որ դրանք պիտանի են հրաձգության համար.

2. սրբել յուղոտ շորով.

3. մաքրել ու յուղել:

Ծանոթություն - ճիշտ են առաջինը թվագրված պատասխանները